ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

2021 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ՄԱՍ Ի

Երևանի քաղաքապետի զեկույցը 2021 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2021 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2020 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2021 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:

5. Քաղաքի կառավարման ներառականության բարելավումը:
6. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
7. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
8. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը:
9. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովումը:
10. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդումը:
11. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացումն ու գործունեության թափանցիկության ապահովումը:
12. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
13. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Երևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
14. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծումը:
15. Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը:
16. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
17. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
18. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
19. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացումն ու ծառայությունների որակի բարելավումը:
20. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:

21. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:
22. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
23. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
24. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
25. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, Երևանի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանման նոր մոդելի ներդրումը:
26. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման մեկնարկի ապահովումը:
27. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
28. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
29. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

1.

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով՝ ***92,420,288.7*** *հազ. դրամ,*

ծախսերի գծով՝ ***100,776,765.5*** *հազ. դրամ,*

դեֆիցիտը՝ ***8,356,476.8*** *հազ. դրամ:*

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 92,420,288.7 հազ. դրամի չափով՝ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված 107,146,776.5 հազ. դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2019 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներին 17,389,615.0 հազ. դրամով կամ 23.18 %-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 30,693,825.7 հազ. դրամ՝ 2020 թվականի նախատեսվածից 3,673,576.1 հազ. դրամով ավելի, իսկ 2019 թվականի սեփական եկամուտների փաստացի կատարողականից 5,690,910.2 հազ. դրամով կամ շուրջ 22.76%-ով ավելի:

2021 թվականին սեփական մուտքերը նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում կազմել է 25,2%-ը, իսկ 2021 թվականին սեփական մուտքերը նախատեսվում է եկամուտների ընդհանուր ծավալի 33.2%-ը:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 18,590,755.3 հազ. դրամի չափով կամ 2020 թվականի համար հաստատված ցուցանիշից 3,776,757.0 հազ. դրամով կամ 25.49%-ով ավելի: Հաշվի առնելով, որ ՀՀ Հարկային Օրենսգրքի (օրենսգիրք) 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) բաժինն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից, և Հայաստանի Հանրապետությունում գործելու է «անշարժ գույքի հարկ» տեղական հարկը, 2021 թվականին նախատեսված հարկային եկամուտները ավել են 2019 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 5,409,053.4 հազ. դրամով կամ 41,03%-ով, որից.

- Անշարժ գույքի հարկը նախագծով նախատեսվել է 6,475,645.0 հազ. դրամ կամ 2020 թվականի համար հաստատված ցուցանիշից 1,338,962.9 հազ. դրամով ավելի, որը իսկ 2019 թվականի փաստացի ցուցանիշից 1,830,902.4 հազ. դրամով կամ շուրջ 39.4%–ով ավելի
- Նախագծով նշված օրենքի կիրառման արդյունքում համայնքի վարչական տարածքում հողի հարկի մասով հավաքագրում չի նախատեսվում:

- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 12,115,110.3 հազ. դրամ, 2020 թվականի բյուջեով հաստատված 8,963,233.6 հազ. դրամի դիմաց կամ 3,151,876.7 հազ. դրամով ավել, ինչը ավել է 2019 թվականի փաստացի հավաքագրված գումարից 4,210,740.0 հազ. դրամով կամ շուրջ 53,2 %-ով:

Տեղական տուրքերի գծով 2021 թվականին ծրագրվել են 3,184,562.1 հազ. դրամի մուտքեր 2020 թվականին նախատեսված 3,158,395.0 հազ. դրամի դիմաց կամ 26,167.1 հազ. դրամով ավել, ինչը պակաս է 2019 թվականի փաստացի ցուցանիշից 121,902.0 հազ. դրամով կամ շուրջ 3.69%–ով:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2021 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվել է 1,422,500.0 հազ. դրամ՝ 2020 թվականին նախատեսված 1,401,500.0 հազ. դրամից

21,000.0 հազ. դրամով ավել, ինչը պակաս է 2019 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշից 7.36%-ով:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2021 թվականի համար նախագծով ծրագրվել են 457,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 77,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 380,000.0 հազ. դրամ:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 25,711,003.2 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2020 թվականի ճշտված բյուջեից 373,112.5 հազ. դրամով կամ 1.47%-ով ավել: Ընդ որում.

- Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 2,245,914.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված ցուցանիշից 1,838,985.4 հազ. դրամով ավել, որը ներառում է Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերի շուրջ ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 961,128.1 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված ցուցանիշից 589,562.6 հազ. դրամով պակաս, որը նախատեսում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող <<Երևանի էներգաարդյունավետության>> և <<Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար>> ծրագրերի շրջանակներում ստացվող դրամաշնորհները:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 13,430,355.1 հազ. դրամ՝ 2020

թվականի ճշտված և 2019 թվականի փաստացի ստացված ցուցանիշների չափով:

- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 8,473,606.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ի սկզբանե հաստատվածից 39,252.6 հազ. դրամով ավել, իսկ ճշտված ցուցանիշից 156,295.8 հազ. դրամով պակաս: (ցանկը կցվում է):
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսվել է 600,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2021 թվականի նախագծով ծրագրվել են 44,476,968.1 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 65,273,120.1 հազ. դրամի դիմաց, ինչը նաև ավելացում է 2019 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ 24.03%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2020 թվականին ծրագրվել է 121,366.0 հազ. դրամ՝ 2020 թվականին նախատեսված ցուցանիշի չափով: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 655,130.0 հազ. դրամ՝ 2020 թվականին նախատեսված 649,337.9 հազ. դրամի դիմաց կամ 5,792.1 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումը, ներառյալ ավագանու որոշմամբ սահմանված կարգով և դրույքաչափերով վարձակալության պայմանագրերի վերանայման հնարավորությունները,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 160,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 20,000.0 հազ. դրամով ավել,

- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 324,063.1 հազ. դրամ՝ 2020 թվականի նախատեսված 333,687.2 հազ. դրամի դիմաց, ինչը սակայն 2019 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից ավել է 52.82%-ով:
- պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև Երևանի կոշտ թափոնների կառավարման, Երևանի քաղաքային լուսավորության քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2021 թվականի համար ծրագրվել են 36,015,459.6 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված 56,682,263.7 հազ. դրամի և 2019 թվականի 27,881,769.6 հազ. դրամի դիմաց կամ համապատասխանաբար 20,666,804.1 հազ. դրամով պակաս և 8,133,690.0 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է):
- տեղական վճարների գծով ծրագրվել է 5,726,329.3 հազ. դրամ՝ 2020 թվականի 5,817,352.3 հազ. դրամի համեմատ, ինչն ավելի է նաև 2019 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 929,317.4 հազ. դրամով կամ 19.37%-ով: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,471,974.8 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և

շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 151,000.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 2,000.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայատեղում կայանելու համար ծրագրվել է 1,210,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 43,200.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 650,321.5 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 15,000.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 2,533.0 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 9,000.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 2,000.0 հազ. դրամ, այլ տեղական վճարների համար՝ 169.300.0 հազ. դրամ:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականին ծրագրված ցուցանիշից ավելի 170,000.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշը:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 495,100.0 հազ. դրամ, որից 250,000.0 հազ. դրամը՝ ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից,

- մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից եկամուտի գծով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ:
- նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի՝ տրամադրված արտաքին աղբյուրներից եկամտի գծով ծրագրվել է 12,000. հազ. դրամ՝ 2020 թվականին ծրագրված ցուցանիշի չափով:
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 762,520.0 հազ. դրամ՝ 2020 թվականի բյուջեով նախատեսված 976,520.0 հազ. դրամի դիմաց:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 100,776,765.5 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 87.9%-ը կամ 88,633,243.7 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 12,143,521.8 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 4,541,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը պակաս է 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 15,482,822.0 հազ. դրամով, որը հիմնական պայմանավորված պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների բյուջեի կրճատմամբ:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 35.8%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 18.2%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 17.3%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 6,459,016.0 հազ. դրամի չափով, որից 6,240,955.6 հազ. դրամը վարչական մասը (վարչական եկամուտների 6.9%–ը), իսկ 218,060.4 հազ. դրամը ֆոնդային մասը: Վարչական մասի պահուստային ֆոնդից 5,897,083.0 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի կատարմանը:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասով ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը: Նման օրենսդրական շեմն ըստ էության խնդիր է առաջացնում համայնքներից միայն Երևան համայնքում, հաշվի առնելով եկամուտների կազմում պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. <u>Կառավարման մարմնի պահպանում</u> ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող միակ բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 9,405,027.7 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 9.4%–ը, ինչը 2020 թվականի հաստատված համապատասխան ցուցանիշից պակաս է 144,337.3 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում <u>աշխատավարձի ֆոնդը</u>՝ 5,566,854.2 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Երևան քաղաքի ավագանու 2018

թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա՝ հաշվի առնելով նաև դրանում կատարված փոփոխությունները: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 2133.5 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1918.5 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների), որից միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմում է 1828.5: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2020 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: Նույն սկզբունքով՝ հաշվարկված և նախատեսված հաստիքներում աշխատող անձանց խրախուսման համար, աշխատավարձի ֆոնդի 34.1%–ի չափով նախատեսվել է պարգևատրման ֆոնդ: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2021 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N422-Ն, 2016 թվականի նոյեմբերի 25-ի N333-Ն և 2017 թվականի նոյեմբերի 22-ի N499-Ն որոշումների պահանջները: Մասնավորապես, այս հոդվածով 2020 թվականին նախատեսվել է 264,717.9 հազ. դրամ՝ 2020 թվականի 263,211.4 հազ. դրամի դիմաց կամ 1,235.0 հազար դրամով ավել: Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 19,206.9 հազ. դրամի չափով՝ 2020 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 332.6 հազ. դրամով ավելի: Կապի ծառայությունները ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 168,336.7 հազ. դրամ, ինչը ավել է 2020 թվականի ցուցանիշից 14,909.0 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է փոստային ծառայությանների մատուցման արժեքով: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 16,580.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված

մեքենաների քանակը: Ծրագրված գումարը ավել է 2020 թվականին նախատեսված ցուցանիշից 10,057.0 հազ. դրամով: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 38,707.0 հազ. դրամ՝ 2020 թվականին նախատեսված ցուցանիշից 2,194.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը և այլ անհրաժեշտ սարքավուրմների կամ գույքի վարձակալությունները: Ներքին գործուղումների գծով ծախսերի համար նախատեսվել է 1,000.0 հազ. դրամ, իսկ Արտասահմանյան գործուղումների գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի ծախսերը, 2021 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 58,500.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 56,000.0 հազ. դրամով պակաս: Այս հոդվածով նախատեսված ծախսերը վերաբերում են Երևանի քաղաքապետարանի՝ ներառյալ Երևան քաղաքի ավագանու անդամների, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործուղումներին: Վարչական ծառայությունների գծով նախատեսվել է 11,810.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև թարգմանչական ծառայությունների համար՝ 2020 թվականին նախատեսված 14,480.0 հազ. դրամի դիմաց: Համակարգչային ծառայությունների գծով ծրագրվել է 57,113.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար: Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 66,982.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման և միջազգային փորձի ուսումնասիրության համար աշխատակիցների վերապատրաստման ծրագրերին ակտիվորեն մասնակցելու գործընթացը ապահովելու համար, 2020 թվական

հաստատված ցուցանիշից 47,718.0 հազ. դրամով պակաս: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 22,271.0 հազ. դրամի չափով՝ 2020 թվականին հաստատված ցուցանիշից 1,062.9 հազ. դրամով ավել՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 24,900.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 10,100.0 հազ. դրամով պակաս և ներառում են աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար, ինչպես նաև փորձաքննության և փորձագիտական ծառայությունները: Ներկայացուցչական ծախսերի գծով ծրագրվել է 76,732.0 հազ. դրամ, ինչն պակաս է 2020 թվականի հաստատված ցուցանիշից 38,000.0 հազ. դրամով: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ծրագրվել են 45,823.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերագնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները: Մասնագիտական ծառայությունների գծով նախատեսվել է 13,020.9 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության, վարչական շենքերում վերելակների փորձաքննության տրամադրման համար և ծրագրվել է 2020 թվականի հաստատված բյուջեից 2,446.0 հազ. դրամով ավել: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 207,844.9 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 9,911.7 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել

են 2020 թվականի գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները և քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները: Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 77,793.0 հազ. դրամ, ինչը ավել է 2020 թվականի հաստատված բյուջեից 1,650.1 հազ. դրամով, և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 139,757.8 հազ. դրամի չափով 2020 թվականի հաստատված ցուցանիշից 27,530.4 հազ. դրամով պակաս և հաշվարկվել են վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ գծով նախատեսվել է 26,311.4 հազար դրամ՝ 2020 թվականի 23,218.6 դիմաց, որը հիմնականում նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: Հատուկ նպատակային այլ նյութերի գծով ծրագրվել է 66,900.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա հաստատված ցուցանիշից 57,870.0 հազ. դրամով ավել, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության պայմաններում՝ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման շրջանակներում՝ դիմակների, ձեռնոցների, ախտահանիչ նյութերի և այլ նյութերի ձեռք բերման համար: Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին հոդվածով ծրագրվել է 223,896.4 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները՝ 2020 թվականի ցուցանիշից 2,146.4 հազ. դրամով պակաս: Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին հոդվածով ծրագրվել է 11,763.6 հազ. դրամ՝ 11,763.6 հազ. դրամով պակաս քան 2020 թվականին, նշված ծախը նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի թվով 2 ավտոբուսների սպասարկման համար, որոնք իրականացնելու են աշխատակազմի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին՝ առավոտյան և երեկոյան ժամերին, սահմանված 2 ուղղություններով: Այլ նպաստներ բյուջեից հոդվածով

նախատեսվել է 53,270.0 հազ. դրամ, որից 230.0 հազ. դրամը հատկացվում է որպես խեղման նպաստ, իսկ 53,040.0 հազ. դրամը՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին: Պարտադիր վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 6,602.1 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեից 3,159.6 հազ. դրամով ավել: Այլ ծախսեր հոդվածով ծրագրվել է 52,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 1,000.0 հազ. դրամով պակաս՝ 2021 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի կամ դրանց փոփոխությունների համար: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 106,341.7 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 159,672.0 հազ. դրամի դիմաց: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա, որոնք արդեն պիտանի չեն օգտագործման և ենթակա են դուրս գրման՝ ապահովելով արդյունավետ աշխատանք: Այլ մեքենաներ և սարքավորումների գծով նախատեսվել է 41,150.0 հազ. դրամ, որը պակաս է 2020 թվականի հաստատված ցուցանիշից՝ 15,850.0 հազ. դրամով և նախատեսվել է վարչական շենքում տարբեր հզորության ֆանկոլների ձեռք բերման, ներքին ցանցի բաժանարարների արդիականացման, Բյուզանդ 1/3 հասցեի վարչական շենքի հակահրդեհային համակարգի արդիականացման և նոր վերելակի ձեռք բերման համար:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 106,853.9 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 130,199.7 հազ. դրամի դիմաց կամ 17,500.0 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվում է Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների վարչական շենքերի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր ծրագրով նախագծով ծրագրվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ:

Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2021 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն:

4. <u>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով ծրագրվել է 95,245.7 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները:

5. <u>Նախագծային աշխատանքներ</u> ծրագրով նախատեսվել է 235,242.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 204,020.0 հազ. դրամի դիմաց կամ 31,222.0 հազ. դրամով ավելի՝ 2020 թվականի բյուջեն ծրագրելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

6. <u>Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն</u> ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման աշխատանքներ:

7. <u>Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում</u> ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ Նուբարաշեն վարչական շրջանի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելու, ինչպես նաև Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծի լրամշակման առաջին փուլի համար:

8. <u>Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ</u> ծրագրով նախատեսվել է 56,400.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 2,900.0 հազ. դրամով պակաս է 2020 թվականի հաստատված ցուցանիշից:

9. <u>Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ</u> ծրագրով նախատեսվել է 51,652.4 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 51,850.0 հազ. դրամի դիմաց, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի

սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

10. <u>Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և Զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն</u> ծրագրերով նախատեսվել է 53,350.0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործող օրենդրությամբ նախատեսված նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելու խնդրով: Նշված ծրագրով՝ 2021 թվականին, նախատեսվում է նաև՝ Երևան քաղաքում տեղակայված հիդրանտների հիմնանորոգում, և նորերի կառուցում:

11. <u>Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում</u> ծրագրով նախատեսվել է 9,270.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

12. <u>Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն</u> ծրագրով նախատեսվել է 13,200.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ տնտեսական և առևտրային հարաբերությունները կարգավորել Երևան քաղաքում:

13. <u>Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում</u> ծրագրով նախատեսվել է 24,076.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 290,000.0 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել Նորք Մարաշ վարչական շրջանի Արմենակյան փողոցով և Նորքի այգիներ հասցեում գտնվող որոգման ցանցը՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը: Ծրագրով նախատեսված գումարի նվազեցումը պայմանավորված է ոռոգման ցանցի պահպանման աշխատանքները կանաչ գոտիների պահպանման ծրագրում ներառելու հանգամանքով:

14. <u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության»</u> ծրագրի իրականացման համար նախատեսվել է 1,095,238.1 հազ. դրամ, որից 136,904.8 հազ. դրամը Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի

հասանելիության ապահովման բաղադրիչները: Ծրագրով նախատեսվում է նաև վերականգնվող էներգիայի՝ արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը:

15. **<u>Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային</u>** ծրագրի համար նախատեսվել է 821,428.6 հազ. դրամ, որից 136,904.8 հազ. դրամը Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է:

16. **<u>«Երևանի էներգաարդյունավետության»</u>** ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսվել է 600,000.0 հազ. դրամ, որպես պետական աջակցություն:

17. **<u>«Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար.» դրամաշնորհային</u>** ծրագրի իրականացման համար նախատեսվել է 349,204.2 հազ. դրամ, որի շրջանակում նախատեսվում է շուրջ 55 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերոնշյալ շենքերի շքամուտքերում (առաջինից մինչև վերջին հարկ) և բակային տարածքներում տեղադրել ժամանակակից էներգախնայող LED լուսատուներ: Կներդրվի նաև տվյալների առցանց հավաքագրման և վերլուծության մոնիթորինգային համակարգ:

18. **<u>«Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար»</u>** ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսվել է 30,584.2 հազ. դրամ:

19. **<u>Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ–բետոնյա ծածկի հիմնանորոգում</u>** ծրագրերով նախատեսվել է 3,826,650.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի՝ 3,942,500.0 հազ. դրամի դիմաց: Նախատեսված գումարից 3,284,000.0 հազ. դրամը ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով ներկայացված նպատակային հատկացումն է (սուբվենցիա):

20. **<u>Եզրաքարերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 245,375.5 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչն ավել է 2020 թվականի հաստատված ցուցանիշից 51,537.5 հազ. դրամով:

21. **<u>Հենապատերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 120,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեից 260,000.0 հազ. դրամով պակաս: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորգման հրատապության աստիճանի:

22. **<u>Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 120,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2020 թվականի հաստատված բյուջեից 260,000.0 հազ. դրամով: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգել Կոմիտաս, Դավիթ Անհաղթ փողոցների խաչմերուկում գնտվող գետնանցումը:

23. **<u>Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 173,700.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2020 թվականի հաստատված բյուջեից 6,300.0 հազ. դրամով: Այն ուղղվելու է Երևան քաղաքի կամուրջների, վերգետնյա անցումների և ուղեանցերի սպասարկմանը:

24. **<u>Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում</u>** ծրագրով նախատեսվել է 9,000.0 հազ. դրամ՝ ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշից 4000.0 հազ. դրամով ավել՝ Հրազդանի կիրճում և Երևանյան լճում ընթացիկ բարեկարգման և մաքրման աշխատանքների համար, ինչպես նաև մետաղական արգելապատնեշների վերանորոգման համար:

25. **<u>Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 374,090.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 321,910.0 հազ. դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կապիտալ հիմնանորոգել՝ Կողբացու և Աթենքի փողոցների մայթերը, կառուցել նորերը՝ Ավետիսյան փողոցում և Բաղրամյան փակուղում, ինչպես նաև իրականացնել մայթերի սալիկապատման և վերանորոգման աշխատանքներ:

26. **<u>Փողոցների պահպանում և շահագործում</u>** ծրագրով նախատեսվել է 213,089.1 հազ. դրամ՝ 2020 թվականի բյուջեից 63,589.1 հազ. դրամով ավելի, որն ուղղվելու է Երևանի հիմնանորոգված փողոցների վթարված հատվածների վերականգնման, փողոցների միջնապատերի և այլ հատվածների ընթացիկ բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար, ինչպես նաև դիտահորերի կափարիչների բարձրացման, Մյասնիկյան և Սարալանջի փողոցներում ճանապարհները քարաթափումներից ցանցապատելու աշխատանքների իրականացման համար:

27. **<u>Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել է 412,761.7 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, ինչը 125,458.9 հազ. դրամով պակաս է քան 2020 թվականի հաստատվածը:

28. **<u>Թեքահարթակների կառուցում</u>** ծրագրերով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով նախատեսվել է 22,528.0 հազ. դրամ՝ շուրջ 125 թեքահարթակի կառուցման համար:

29. **<u>Տրանսպորտային համակարգի արդիականացում</u>** ծրագրով նախատեսվել է 4,000,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է արդիականացել Երևան քաղաքի տրանսպորտային ցանցը, մասնավորապես՝ հին տրանսպորտային միջոցները փոխարինել նորով:

30. **<u>Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում</u>** ծրագրով նախատեսվել է 364,961.2 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, ծառաբների մետաղական ծածկույթներ, հայտարարությունների ցուցատախտակներ, տեղադրել քաղաքային նոր ինստալյացիաներ, այգիներում ավելացնել նստարանների քանակը, բակերում տեղադրել զրուցարաններ, փողոցներում տեղադրել թուջե արգելապատնեշներ ինչպես նաև վերանորոգել նախորդ տարիներին տեղադրված նստարաններն ու աղբամանները:

31. **<u>Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ</u>** ծրագրով նախատեսվել է 1,590,000.0 հազ. դրամ, որի նպատակն է Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի (պատվիրակված լիազորություններ) շրջանակներում, բնակիչների փոխհատուցումը:

32. **<u>Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման</u>**

<u>ներդրումների ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրերով նախատեսված է 2,433,449.6 հազ. դրամ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Արշակունյաց պողոտայի վերակառուցման, Աշտարակի խճուղու վերակառուցման և Նոր Շիրակ ճանապարհահատվածի, ինչպես նաև Արշակունյաց-Գարեգին Նժդեհ և Արշակունյաց-Բագրատունյաց փողոցների խաչմերուկներում տրանսպորտային հանգույցների կառուցման աշխատանքներ, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, ծրագրի կառավարում և կարողությունների զարգացում:

33. **<u>Վերելակների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 1,145,631.4 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեի 5,179,200.8 հազ. դրամի դիմաց՝ բազմաբնակարան շենքերի համար թվով 100 վերելակների ձեռք բերման, ինչպես նաև հին վերելակների պահպանումը իրականացնելու համար խիստ անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

34. **<u>Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 2,787,732.0 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

35. **<u>Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել է 628,315.6 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ–ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա) :

36. **<u>Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ)</u>** նախատեսվել են ընդհանուր 683,410.0 հազ. դրամի ծրագրեր որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը (ցանկը կցվում է):

37. **<u>Զբոսաշրջության զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 59,600.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 86,000.0 հազ. դրամով պակաս՝ Երևան քաղաքի (այդ թվում՝ տեսարժան վայրերի) վերաբերյալ տեղեկատվական բուկլետների տպագրման և տարածման, Սիթի տուր ավտոբուսում ականջակալների ապահովման, Երևանը զբոսաշրջիկների համար ճանաչելի դարձնելուն ուղղված միջոցառումների, տեղեկատվական հարթակների, ինչպես նաև մարքեթինգային քաղաքականության իրականացման համար:

38. **<u>Դրոշների տեղադրում</u>** ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

39. **<u>Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար</u>** ծրագրով նախատեսվել է 14,368.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեից 3,124.0 հազ. դրամով պակաս, ինչը ծրագրավորվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

40. **<u>Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 168,100.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ–ին սուբսիդավորելու համար, ծրագրվել է 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

41. **<u>Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին</u>** ծրագրով նախատեսվել է 534,083.6 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

42. **<u>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</u>** ծրագրով նախատեսվել են մուտքեր 4,541,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 540,000.0 հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 4,000,000.0 հազ. դրամի չափով, որից 3,700,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 300,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնակամ կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից:

գ) Շարժական գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,000.0 հազ. դրամի չափով:

Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ողջամիտ ակտիվացման հնարավորությունները:

43. **<u>Տոնական ձևավորում</u>** ծրագրով նախատեսվել է 127,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին և Ամանորին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու համար:

44. **<u>Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 44,370.0 հազ. դրամ՝ որը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին:

45. **<u>Ներդրումային ծրագրերի իրականացում</u>** ծրագրով նախատեսվում է 133,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեից 4,930.0 հազ. դրամով պակաս, որից 18,000.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 115,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

46. **<u>Պարտադիր վճարների գանձման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 14,102.7 հազ. դրամ, որից 4,500.0 հազ. դրամը՝ աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 7,802.7 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձման ծառայության դիմաց վճարման համար:

Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է համատիրությունների կողմից փաստացի գանձվող աղբահանության վճարի 3%-ի չափով:

47. **<u>Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում</u>** ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

48. **<u>Տոնավաճառների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 1,035.0 հազ. դրամ, որը նախատեսվում է բաշխել վարչական շրջանների միջև համամասնաբար, տոնավաճառների աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար:

49. **<u>Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 385,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 355,000.0 հազ. դրամի դիմաց, ինչը պայմանավորված է Երևան քաղաքում և վարչական շրջաններում 2020 թվականի բյուջով չկանխատեսվող դեպքերում հրատապ լուծում պահանջվող աշխատանքների համար:

50. **<u>Աղբահանություն և սանիտարական մաքրում</u>** ծրագրով նախատեսվել է 361,545.6 հազ. դրամ, որից՝ 65,400.0 հազ. դրամը՝ թվով 5 փոշեկուլների ձեռքբերման, թվով 5 Պիկապ ՈՒազ Պատրիոտ մակնիշի կամ դրան համարժեք ավտոմեքենայի և միկրոավտուբուսի ձեռք բերման համար, 232,500.0 հազ. դրամ՝ կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման համար, 50,000.0 հազ. դրամը ծրագրված է աղբամանների համար հարթակների կառուցման նպատակով, 13,000 հազ դրամը պարկերի, ձեռնոցների, փոցխերի, բահերի ձեռք բերման համար:

51. **<u>Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 352,136.5 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը (խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

52. **<u>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման»</u>** ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 4,054,920.6 հազ. դրամ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից՝ շուրջ 29 հա տարածքում նախագծել, կառուցել և շահագործել եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայրի երկու բջիջ, ինչպես նաև նույն չափորոշիչներին համապատասխան մեկուսացնել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերի տարածքները:

53. **<u>§Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում¦ համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր</u>** ծրագրով նախատեսվել է 4,604,982.8 հազ. դրամ գումար՝ 2020 թվականի բյուջեի համապատասխան ծրագրի չափով:

54. **<u>Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում</u>** ծրագրով նախատեսվել է 398,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեից 121,000.0 հազ. դրամով ավել՝ հեղեղատար և կոյուղատար համակարգի կառուցման և վերակառուցման աշխատանքների, ինչպես նաև Հաղթանակի թաղամասի, Արշակունյաց 39/9 և Ս. Գևորգյան փողոցներում նոր կոյուղագծերի կառուցման համար:

55. **<u>Գետերի հուների մաքրում</u>** ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով, 2020 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

56. **<u>Կանաչ տարածքների հիմնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 3,750,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականին հաստատված ցուցանիշից 95,300.0 հազ. դրամով պակաս, որից 3,400,000.0 հազ. դրամն ուղղվելու է Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանման ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի սուբսիդավորումը, իսկ 350,000.0 հազ. դրամը մեքենասարքավորումների ձեռք բերմանը:

57. **<u>Ախտահանման և միջատազերծման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 27,907.9 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար և ծրագրվել է 2020 թվականի ցուցանիշից 2,816.9 հազ. դրամով պակաս:

58. **<u>Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 14,320.0 հազ. դրամ՝ 9,320.0 հազ. դրամը գործող զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար, իսկ 5,000.0 հազ. դրամոն Արաբկիր վարչական շրջանի տարածքում նախատեսվում է կառուցել 1 հասարակական զուգարան:

59. **<u>Թափառող կենդանիների վնասազերծում</u>** ծրագրով նախատեսվել է 234,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծման խնդիրը կանոնակարգելու համար:

60. **<u>Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքաների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարմանն առնչվող ընդհանուր մարտահրավերների շուրջ աշխատանքների իրականացում</u>** ծրագրերով նախատեսվել է 2,526,347.8 հազ. դրամ, որից 280,433.8 հազ. դրամը համայնքի մասով համաֆինանսավորման տեսքով:

61. **<u>Ինքնակամ կառույցների քանդում</u>** ծրագրով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների համար և այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին:

62. **<u>Շենքերի գեղարվեստական լուսավորում</u>** ծրագրով նախատեսվել է 22,975.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակի և Բագրատունյաց փողոցի շենքերի լուսավորությունը վերականգնելու և պահպանելու նպատակով:

63. **<u>Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 2,229,951.6 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2021 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին 2,229,951.6 հազ. դրամ գումարի չափով:

64. **<u>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության»</u>** ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 1,548,519.6 հազ. դրամ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի

շրջանակներում իրականացվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը, որը նախատեսում է առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, առկա վերգետնյա մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով և ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:

65. **<u>Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 12,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի սեյսմիկ անվտանգության, վթարայնության աստիճանի հետազոտումը և դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

66. **<u>Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում</u>** ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 1,045,609.6 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեի 952,724.4 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում կատարվելու են վարչական շրջանների հարթ և թեք տանիքների նորոգման, հիմնանորոգման աշխատանքներ:

67. **<u>Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 1,670,447.6 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից ընտրված բակերի ընթացիկ նորոգման, բարեկարգման, բակային տարածքներում խաղահրապարակների կառուցման, բակային տարածքների համար զրուցարանների, նստարանների ձեռքբերման, ինչպես նաև շինանյութի ձեռքբերման և վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում խաղահրապարակների նորոգման համար:

68. **<u>Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է ընդհանուր 953,811.6 հազ. դրամ, որից 10,199.6 հազ. դրամը նախատեսվում է շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, իսկ 913,612.0 հազ. դրամը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգման, ջրթափ խողովակների փոխարինման և այլ աշխատանքների համար, 30,000.0 հազար դրամ գումար վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար: Ծրագրված ցուցանիշը ավել է 2020 թվականի ճշտվաշ բյուջեով նախատեսված ցուցանիշից 52,399.2 հազ. դրամով:

69. **<u>Ջրային կառույցների շահագործում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 308,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար 2020 թվականի համեմատ 28,000.0 հազ. դրամով ավելի, 2019 թվականի նույն ցուցանիշից 17,000.0 դրամ գումարով պակաս:

70. **<u>Կաթսայատների պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 15,409.2 հազ. դրամ, 2020 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 1,728.7 հազ. դրամով ավել և ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

71. **<u>Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում</u>** ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված ցուցանիշից 170,000.0 հազ. դրամով պակաս, ինչը ներառում է, քաղաքի վնասված կամարանցումների վերանորոգումը:

72. **<u>Վթարային պատշգամբների նորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 90,255.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված ցուցանիշից 4,864.3 դրամով ավել:

73. **<u>Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 203,340.0 հազ. դրամ՝ 2020 թվականի բյուջեով նախատեսված 202,600.0 հազ. դրամի դիմաց՝ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարքերի, ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարքերի, բիոքիմիական անալիզատորների, ավտո-ռեֆ-կերատոմետրերի, ռենտգեն ապարատների, կոագուլոմետրերի, և այլ առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման և բուժհաստատություններին տրամադրման համար:

74. **<u>Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում</u>** ծրագրով նապատեսվել է 250,000.0 հազ. դրամ՝ համայնքային ենթակայության թվով 8 պոլիկլինիկաների՝ այդ թվում <<Արշակունյաց պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Նորագավիթ պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Նուբարաշեն պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Թիվ 12 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Նոր Արեշ պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Թիվ 15 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Թիվ 16 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, <<Թիվ 20 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի հիմնանորոգման նպատակով:

75. **<u>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 11,500.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին՝ թվով 250 անձի, կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրման համար:

76. **<u>Սպորտային միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 119,140.1 հազ. դրամ՝ 2020 թվականի համեմատ 16,389.2 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված, 2021 թվականին սպասվող միջոցառումների քանակը:

77. **<u>Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 748,942.0 հազ. դրամ, որից՝ 38,000.0 հազ. դրամը Երևանի 2801-ամյակի այգու հոսանքի, ջրամատակարարման համար և Հաղթանակ զբոսայգու անմար կրակի գազամատակարարման համար, 25,500.0 հազ. դրամը քաղաքի տարբեր վարչական շրջաններում հանգստի գոտիների ընթացիկ նորոգման աշխատանքների համար, 612,500.0 հազ. դրամը նոր հանգստի գոտիների՝ Նոր Արաբկիր զբոսայգու, 16թաղ. 1-ին շղթայի այգու, Աբովյան պուրակի, Աբովյան 21 բակի, Գյուլիքևխվյան 19 և 21 շենքերի հարակից այգու, Նուբարաշեն վարչական շրջանի 11 փողոցի հարակից այգու կառուցման և 37,000.0 հազ. դրամ գումար նախատեսվել է Փափազյան, Կոմիտաս և Խաչատրյան փողոցների հարակից տարածքների և այլ հանգստի գոտիների, ինչպես նաև հանրապետության հրապարակի շրջակա տարածքի բարեկարգման և հիմնանորոգման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 10,100.0 հազ. դրամ գումարի սահմաններում ձեռք բերել աղբամաններ, նստարաններ:

78. **<u>Հեծանվահրապարակի շահագործում</u>** ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ հեծանվահրապարակի վերանորոգման և գործունեության ապահովման համար:

79. **<u>Գրադարանային ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 600,730.1 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

80. **<u>Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ</u>** ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով նախատեսվել է 321,602.6 հազ. դրամ:

81. **<u>Թանգարանների նորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ դրամ՝ Երևանի պատմության թանգարանի նորոգման նպատակով:

82. **<u>Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 474,142.3 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով, 2020 թվականի հաստատված բյուջեի չափով:

83. **<u>Մշակութային միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 896,280.7 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված բյուջեից 112,299.2 հազ. դրամով պակաս: Ծրագիրն իր մեջ ներառում է Երևան պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերի, Կանանց միջազգային օրվա /մարտի 8/, Թատրոնի միջազգային օրվա /մարտի 27/, Ջազի միջազգային օրվա /ապրիլի 30/, Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա /ապրիլի 24/, Ամանորյա և այլ մշակութային միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում Ամանորյա միջոցառումների ժամանակ մանկապարտեզների սաներին կտրամադրվեն քաղցրավենիքի նվեր-փաթեթներ:

84. **<u>Կենդանաբանական այգու ցուցադրություններ</u>** ծրագրով նախատեսվել է 302,564.0 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ–ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

85. **<u>Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ</u>** ծրագրով նախատեսվել է 150,451.3 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի 121,390.6 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա», «Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ–ի սուբսիդավորման համար, 2020 թվականի հաստատված բյուջեի չափով:

86. **<u>Թատերական ներկայացումներ</u>** ծրագրով նախատեսվել է 455,271.3 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

87. **<u>Հուշարձանների վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 12,000.0 հազ. դրամ՝ 2019 թվականի հաստատված բյուջեից 2,000.0 հազ դրամով

պակաս՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

88. **<u>Անդամակցության վճարներ</u>** ծրագրով նախատեսվել է 20,400.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիա (EUROCITIES), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության և Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի անդամակցության Հայաստանի համայնքների միության:

89. **<u>ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 60,014.0 հազ. դրամ՝, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի §Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի պետական բյուջում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի հ.1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին գումար հատկացնելու մասին¦ N 1128-Ն որոշումը, ՀՀ պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացում ծրագրի շրջանակներում Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տարածքում Կարեն Դեմիրճյանի արձանի կառուցման աշխատանքների իրականացման համար:

90. **<u>Նախադպրոցական ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 9,063,832.7 հազ. դրամ 2020 թվականի ճշտված բյուջեի 9,076,425.9 հազ. դրամի դիմաց: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 25.7 հազ. դրամ: Յուրաքանչյուր ՀՈԱԿ–ի պահպանման ծախսերի համար նախատեսվել է ամսական 650,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2020 թվականին երեխաների նախատոսված-փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ:

91. **<u>Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչի շրջանակներում ըստ վարչական շրջանների ներկայացրած հայտերի նախատեսվում է Երևանի համայնքի ենթակայության մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք, կենցաղային էեկտրական սարքավորումներ և այլ անհրաժեշտ գույք, 50,000.0 դրամի սահմաններում նախատեսվում է մանկապարտեզների սաների համար ձեռք բերել մանկական խաղեր, խաղալիքներ: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

92. **<u>Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 30,664.2 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա:

93. **<u>Հանրակրթական ուսուցում,</u>** ծրագրով նախատեսվել է 17,170,804.5 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

94. **<u>Արտադպրոցական դաստիարակություն</u>** ծրագրով նախատեսվել է 4,337,357.2 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 25,443.4 հազ. դրամով ավելի: Ծրագիրը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 62,070.8 հազ. դրամի չափով:

95. **<u>«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ–ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 7,547.8 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

96. **<u>Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 132,961.2 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

97. **<u>Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է 110,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականին նախատեսվածից 30,000.0 հազ. դրամով ավել, որից՝ 70,000.0 հազ. դրամը Երևանի ենթակայության երաժշտական դպրոցների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերման համար, 10,000.0 հազ. դրամը՝ գույքի ձեռք բերում և նվիրատվություն Արցախի մշակութային կազմակերպություններին, 30,000.0 հազ. դրամը՝ մարզական կազմակերպությունների համար մարզագույքի ձեռք բերման համար, որից 10,000.0 հազ. դրամը մարզադպրոց հաճախող հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան մարզագույքի ձեռքբերմանը:

98. **<u>Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 107,500.0 հազ. դրամ՝ «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տանիքի վերանորոգման նպատակով:

99. **<u>Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 2,119,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի հաստատված ցուցանիշից 428,000.0 հազ. դրամով ավելի: Ծրագրով նախատեսվում է խիստ անհրաժեշտության և առաջնահերթության սկզբունքի պահպանմամբ իրականացնել մոտ 15 նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի առանձնացման աշխատանքներ՝ համաձայն ներկայացված նախագծերի:

100. **<u>Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 55,000.0 հազ. դրամ՝ 2020 թվականի ճշտված ցուցանիշից 6,500.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվում են մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, առարկայական օլիմպիադաներ, հանրային առողջապահության միջոցառումներ, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ, կիրառական ռազմագիտության միջոցառումներ, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացման ուղղված ծրագրեր:

101. **<u>Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 37,662.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

102. **<u>Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 14,574.9 հազ. դրամ՝ հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագիրը նոր առաջնահերթություններ է նախանշել սոցիալական պաշտպանության ոլորտում, որոնք ուղղված են քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա:

Ելնելով վերոնշյալից՝ Երևանի քաղաքապետարանի պատվերով ձևավորված փորձագիտական թիմը, ՅՈՒՆԻՍԵՖ ու Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունների աջակցությամբ, 2019թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին իրականացրել է Երևան քաղաքի սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հետազոտություն, որի նպատակն էր աջակցել Երևան քաղաքի՝ երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում համակարգի բարեփոխումներին՝ առաջարկելով գործուն մեխանիզմներ ուղղված Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում կառավարման կառուցվածքային անցնցում փոփոխություններին, տեղական մակարդակում նշված համակարգի արդյունավետության բարելավմանը, բազմակողմանի համագործակցությանը, ինչպես նաև համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացմանն ու տեղական սոցիալական պլանավորմանը:

Հիմք ընդունելով ընդունելով վերոգրյալը Երևանի համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծում նախատեսվում են հետևյալ ծրագրերը,

103. «**<u>Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով նոր համակարգի ներդրման իրականացում»</u>** ծրագրով նախատեսվում է 34,500.0 հազ. դրամ՝ համայնքային ծառայողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստումների իրականացման, Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպման, Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի ներդրման համար անհրաժեշտ ընթացակարգերի

մշակման (օրինակ՝ էլեկտրոնային հարթակ, տեղական սոցիալական ծրագրեր, մշտադիտարկում և այլն), սոցիալական աշխատողների համար նյութատեխնիկական միջոցների ապահովման նպատակով:

104. «**Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում»** ծրագրով նախատեսվել է 69,000.0 հազ. դրամ՝ տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքի կարիքի գնահատման շրջանակում տունայցերի համար ճանապարհային ծախսերի փոխհատուցման, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերին միջոցառումների իրականացման նպատակով:

105. **«Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերության և ձեռներեցության ծրագրերի իրականացում»** ծրագրով նախատեսվել է 54,000.0 հազ. դրամ՝ զբաղվածության խթանման նպատակով:

106. **«Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում»** ծրագրով նախատեսվել է 86,800.0 հազ. դրամ՝, ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցության, տնանկների համար նախատեսված շուրջօրյա խնամքի կենտրոնի ծառայության, հաշմանդամության խումբ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կենտրոնի ծառայության և կարիքի գնահատման արդյունքում սոցիլական աջակցության և ծառայությունների տրամադրման նպատակով:

107. **«Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն»** ծրագրով նախատեսվել է 96,500.0 հազ. դրամ՝ թվով 500 բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև բազմազավակ և երիտասարադ ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացման (մոդուլների մշակում, տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն) նպատակով:

108. **«Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն»** ծրագրով նախատեսվել է 45,800.0 հազ. դրամ՝ թվով 30 հայրենադարձ ընտանիքներին աջակության նպատակով:

109. **<u>«Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն»</u>** ծրագրով նախատեսվել է 171,000.0 հազ. դրամ:

110. **<u>Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 361,715.5 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

111. **<u>Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվում է 692,352.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

112. **<u>Առողջության ապահովագրություն</u>** ծրագրով նախատեսվել է 674,117.0 հազ. դրամ, 2020 թվականի ցուցանիշից 9,613.3.0 հազ. դրամով պակաս: Յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի (գումարի) գումարը նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ, ինչը ապահովագրություն ստացող անձի պարագայում տարվա կտրվածքով նախատեսում է մինչև 4,000,000 դրամի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, շախմատի դպրոցների, մանկապարտեզների աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարորդների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների համար, ինչպես նաև մարզադպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, ՄՊՍԿ-ների, մշակույթի կենտրոնների, ինչպես նաև «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքնային հիմնարկի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակիցներին :

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 8,356,476.8 հազ. դրամի չափով պակասուրդ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագիրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 958,333.3 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 7,940,000.0 հազ. դրամի չափով: Միաժամանակ նախատեսվում է 380,002.5 հազ. դրամն ուղղել «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, 11,854.0 հազ. դրամն ուղղել «Երևանի

քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, իսկ 150,000,0 հազ. դրամը՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2020 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Այսպիսով, Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *եկամուտների գծով՝ 92**,420,288.7** հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ 100**,776,765.5** հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 8**,356,476.8** հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ*